ԻԸ. ԵՐԵԻԵԼԻ ՔԻԹԸ

Վերջապէս հասանք Բաղէշ, որ այլ անունով կոչւում է Բիթլիս: Իջեւանելու համար ընտրեցինք քաղաքի պանդոկներից (խան) մէկը: Երբ կանչեցինք օդաբաշուն, որ մեզ մի սենեակ ցոյց տայ, յայտնուեցաւ մի այլանդակ մարդ, բանալիների փունջը գօտիից քարշ ընկած: Ետ ծալած բազուկները մինչեւ արմունկները դրոշմուած էին Երուսաղէմի նշաններով: Այդ արդէն ապացոյց էր, որ նա մահտեսի էր, եւ մենք մի բարեպաշտ ուխտաւորի հետ գործ ունէինք: Եւ այդ էր պատճառը, որ նրան կոչում էին հաջի Իսաղ: Մինը միւսի ետեւից շտապով բաց արեց սենեակների դռները եւ առաջարկեց ամենայարմարը ընտրել: Իսկ սենեակների արժանաւորութիւնը ցոյց տալու համար, նա մի առ մի յիշեցնում էր մեզ, թէ որ տարում եւ որ ժամանակ ինչ նշանաւոր մարդիկ են բնակուել նրանց մէջ: Իբրեւ ապացոյց, նա ցոյց տուեց մեզ եւ մի քանի արձանագրութիւններ, որ ածուխով գրած էին պատերի վրայ, թէեւ այդ արձանագրութիւնները լաւ վկայութիւն չէին տալիս հաջիի բարոյականութեան մասին: Մի պատի վրայ գրած էր. «եթէ հաջի Իսաղին շուկան ուղարկես մի բան գնելու, դու էլ հետը գնայ»: Մի այլ տեղ. «հաջի Իսաղի ասածներից եթէ հազարից մէկը ճշմարիտ լինի, ջորին կծնի»: Եւ այսպէս, համարեա բոլոր արձանագրութիւնների մէջ հաջիի անունը մեծ դեր էր խաղում: Ի հարկէ, եթէ հաջին գրագէտ լինէր, նրանցից եւ ոչ մէկը չէր թողնի, բայց, երեւի, նրան ասել էին, որ լաւ բան են գրել:

Մենք շատ խստապահանջ չեղանք, ընտրեցինք սենեակներից մէկը եւ մտանք քարէ տուփի մէջ: Իրաւ որ, քարէ տուփ: Ամբողջ պանդոկը շինուած էր կոփածոյ քարերից: Սենեակները նոյնպէս, թէ դրսից, թէ ներսից տաշած քարերից էին շինուած: Լոյս ընդունում էին միայն բաց թողած դռնից եւ այդ պատճառով վանքերի նեղ խուցերի նմանութիւն ունէին: Պանդոկը երկու յարկանի էր. վերին յարկում բնակւում էին ճանապարհորդներ, իսկ ներքին յարկում, քառանկիւնի բակի շուրջը, շարքով զետեղուած էին զանազան վաճառքների կրպակներ:

Ոչ մի կարասիք չկար մեր ընտրած սենեակում. մերկ պատերը, մերկ յատակը, տիրող մռայլը ծանր տպաւորութիւն էին գործում: Ասիական այլ ճանապարհորդների համար, որոնք ամէն պատրաստութիւններ իրանց հետ ման են ածում, գուցէ այդպիսի իջեւաններ յարմար կը լինէին, բայց մենք մի կապերտի կամ գորգի կտոր անգամ չունէինք մեզ հետ, որ ձգէինք յատակի վրայ եւ նստէինք:

Մեր բախտից հաջի Իսաղը խուլ յայտնուեցաւ, բայց մի զարմանալի խուլ՝ եթէ վատ բան ասէիր, նա չէր լսի, իսկ եթէ լաւ բան ասէիր, իսկոյն կը